ՀՐԵՇՏԱԿ ԵՒ ՄԱՆԿԻԿ

Հրեշտակ մի լոյս երեսով
Որ օրոցի մ'խոնարհած քով,
Կարծես՝ իրեն դէմք կը տեսնար
Իբր յառուակի ջինջ և պայծառ։

« Սիրուն մանկիկ, ինձ նման ես,
Կ'ասէր, « Արի, եկ ետևէս.
« Չէ արժանի երկիրս քեզի
« Մէկ տեղ լինիմք, երնէկ մեզի։
« Հոգ բերկրութիւն չկը կատարեալ,
« Հաճոյք՝ հոգւոյն կու տան մրռայլ.
« Զուարթ ձայնին խառն են ցաւոց վանկ,
« Եւ հեշտութեան՝ դառն հառաչանք։
« Հանդէպ տօնից են ահալի,
« Պայծառ խաղաղ չըկայ օր մի,
« Փոթորկախառըն սև մրրկէ,
« Վաղուան օրն ևրս ազատ չէ։
« Մեղք, պիտի դան վիշտք ահարկու,
« Ջամբիծ ճակատըդ խռովելու.
« Դառնակրսկիծ աղի արցունք
« Պի՝ մրթագնեն կապոյտ աչկունք։
« Ոչ ոչ. ազատ անարգել տեղ,
« Թրռչինք երթանք մենք միատեղ.
« Գոյին վերայ երկինք գրթաց,
« Կ'անցնես օրերդ անկասկած.
« Քեզի համար և ոչ մէկուն
« Ըզգեստք՝ սրգոյ գոյն թող չառնուն,
« Քո ծընընդեանդ, մահուդ վայրկեան
« Թող անտարբեր լինին մարդկան։
« Քո սիրելիք՝ խոց վրշտահար
« Թող չըկանգնեն քեզ խաչաքար.
« Մաքուր, անմեղ են քո տարիք
« Եւ յետին օրդ շատ գեղեցիկ »։

Եւ թօթուելով ճերմակ թևեր
Խօսքը կըտրեց, թրռաւ 'ի վեր,
Դէպ 'ի յերկնից սուրբ կայարան.
Խեղճ մայր, որդիդ... աւար մահուան։

digitised by A.R.A.R.@